22130507

International Baccalaureate®
Baccalauréat International
Bachillerato Internacional

ARMENIAN A: LITERATURE – STANDARD LEVEL – PAPER 1
ARMÉNIEN A : LITTÉRATURE – NIVEAU MOYEN – ÉPREUVE 1
ARMENIO A: LITERATURA – NIVEL MEDIO – PRUEBA 1

Wednesday 8 May 2013 (morning)
Mercredi 8 mai 2013 (matin)
Miércoles 8 de mayo de 2013 (mañana)

1 hour 30 minutes / 1 heure 30 minutes / 1 hora 30 minutos

INSTRUCTIONS TO CANDIDATES

- Do not open this examination paper until instructed to do so.
- Write a guided literary analysis on one passage only. In your answer you must address both of the guiding questions provided.
- The maximum mark for this examination paper is *[20 marks]*.

INSTRUCTIONS DESTINÉES AUX CANDIDATS

- N'ouvrez pas cette épreuve avant d'y être autorisé(e).
- Rédigez une analyse littéraire dirigée d'un seul des passages. Les deux questions d'orientation fournies doivent être traitées dans votre réponse.
- Le nombre maximum de points pour cette épreuve d'examen est *[20 points]*.

INSTRUCCIONES PARA LOS ALUMNOS

- No abra esta prueba hasta que se lo autoricen.
- Escriba un análisis literario guiado sobre un solo pasaje. Debe abordar las dos preguntas de orientación en su respuesta.
- La puntuación máxima para esta prueba de examen es *[20 puntos]*.

© International Baccalaureate Organization 2013

Հետևյալ հատվածներից ***մեկի*** *մասին գրեք մի գրական մեկնաբանություն: Ձեր պատասխանը պետք է շոշափի ներկայացված երկու հարցումները:*

1.

Հազար ութը հարյուր յոթանասուն… չեմ հիշեր՝ քանիին, սեպտեմբերի երեսունը մեկին,— ներեցեք, երեսունին պիտի ըսեի, վասնզի սեպտեմբերն երեսուն օր միայն ունի,— երկար և ընդարձակ թիկնոցի մը մեջ փաթաթված միջահասակ և գիրուկ մարդ մը, որ Տրապիզոնի շոգենավեն նոր ելած էր, Ղալաթիո նավամատույցին վրա կայնած՝ նավակե մը յուր սնդուկները հանել կաշխատեր:

Կը տեսնեք՝ որչափ պարզությամբ սկսա: Պատմությունս հետաքրքրական ընելու ջանքով և անկից քանի մը հարյուր օրինակ ավելի ծախելու համար չըսի, թե նույն օրն սաստիկ հով մը կար, թե տեղատարափ անձրև կուգար, թե խառն բազմություն մը հետաքրքրությամբ դեպի Ղալաթիո հրապարակը կը վազեր, թե ոստիկանությունն աղջիկ մը ձերբակալած էր և այլն խոսքեր, որովք վիպասաններն կսկսին միշտ իրենց վեպերը: Ես ալ կրնայի ըսել այս ամենը, բայց չըսի, որովհետև նույն օրն ոչ հով կար, ոչ անձրև, ոչ խուռն բազմություն և ոչ ձերբակալված աղջիկ մը:

Այս ճամփորդն օժտված էր զույգ մը խոշոր և սև աչքերով, զույգ մը հաստ, սև և երկար հոնքերով, զույգ մը մեծ ականջներով և զույգ մը քիթեր… չէ՛, չէ՛, մեկ քիթով, թեպետ և բայց զույգ մը քիթերու տեղ կրնար ծառայել. անոր մեծությունը սխալեցուց զիս: Ուներ այնպիսի նայվածք մը, որուն եթե պ. Հ. Վարդովյան* հանդիպեր յուր աչերով, կը հարցուներ այդ մարդուն. «Ի՞նչ ամսական կուզես՝ թատրոնիս մեջ ապուշի դեր կատարելու համար»:

Սնդուկներն և անկողինն, որ քուրջի մը մեջ ներփակված էին, նավակեն հանելուն պես ճամփորդն քաշեց քսակն ու նավավարին իրավունքը վճարելով՝ բեռնակիր մը կանչեց: Հինգ բեռնակիրներ ներկայացան իրեն: Տարակույս չկա, որ եթե հինգ կանչեր, քսան և հինգ պիտի ունենար յուր առջև մայրաքաղաքիս սովորությանը համեմատ:

— Ո՞ր կողմ պիտի երթաք աղա,— հարցուց բեռնակիրներեն մին՝ մեկ ոտքը սնդուկներեն միույն վրա կոխելով:

— Բերա, Ծաղկի փողոց, թիվ 2 պիտի երթամ,— պատասխանեց խոշոր մարդը:

— Շատ աղեկ, հասկցա, Բերա, Ծաղկի փողոց… պատվական փողոց մ՚է,— ըսավ հարցումս ընող բեռնակիրն և սնդուկին մեկն ալ շալկելով սկսավ երթալ:

— Ծաղկի փողոցն ես ալ գիտեմ,— ըսավ երկրորդ բեռնակիրն և սնդուկին մեկն ալ ինք առնելուն պես՝ Բերայի ճամփան բռնեց:

— Ես ամեն օր կերթամ Ծաղկի փողոցն,— ըսավ երրորդն և մարդուն անկողինը գետնեն վերցնելն, կռնակին վրա առնելն ու վազելն մեկ ըրավ:

Այս գործողություններն այնքան արագությամբ կատարվեցան, որ մարդը շվարելով սկսավ չորս կողմը նայիլ՝ տեսնելու համար բեռնակիրներն, որ բազմության մեջ անհայտ եղած էին:

Ճամփորդն ալ յուր սնդուկներուն ետևեն երթալ կը պատրաստվեր, երբ բարձրահասակ, թխադեմ, փոքր աչերով մարդ մը ուսերը տնկած, ձեռները շփելով և բռնազբոսյալ ժպիտով մը մոտեցավ անոր և քաղաքավարական ձևով մը ձեռները բռնելով հարցուց.

— Դո՞ւք եք, Աբիսողոմ աղա, ե՞րբ եկաք, ո՞ր շոգենավով եկաք, ի՞նչպես եք, ձեր եղբայրն ի՞նչպես է, ազգային գործերն ի՞նչպես են Տրապիզոն, հացին գինը քա՞նի է հոն, անձրև եկա՞վ այս օրերս ձեր քաղաքը… վայ, Աբիսողոմ աղա, վայ…

— Ես եմ Աբիսողոմ աղան, հիմա եկա, տաճկի շոգենավով եկա, շատ աղեկ եմ, եղբայրս ալ աղեկ է, ազգային գործերն ալ աղեկ են Տրապիզոն, հացին գինը մեկ դահեկան է, անձրև չեկավ այս օրերս մեր քաղաքը,— պատասխանեց փութով թիկնոցաբնակն՝ առանց ճանաչելու այս անձն:

— Ներեցեք, թողություն ըրեք, որ չկրցի մինչև շոգենավ գալ զձեզ դիմավորելու համար։ Ինձի գրված էր Տրապիզոնեն, որ այս շաբթու անպատճառ հոս պիտի գաք…

— Ես ատանկ բաներու չեմ նայիր:

— Արդարև մայրաքաղաքս ինքզինքը բախտավոր համարելու է ձեզի պես պատվական ազգային մը, շնորհալի երիտասարդ մը, ողջամիտ մեկը…

— Սնդուկներս…

— Ազնիվ սիրտ մը, վեհանձն հոգի մը…

— Բեռնա…

— Հայրենասեր անձ մը…

— Կիրները…

— Ազգասեր, ուսյալ, կրթյալ…

— Սնդուկ…

— Դաստիարակյալ…

— Ներս առին, տարին…

— Ազնվասիրտ, ազնվախոհ, ազնվադեմ մեկը իր մեջ ունենալու համար:

— Սնդուկներուս մեջ ատանկ բաներ չկան,— պատասխանեց Աբիսողոմ աղան քալել սկսելով՝ բեռնակիրները գտնելու համար:

Հակոբ Պարոնյան, *Մեծապատիվ մուրացկաններ*, Պոլիս (1887)

---

* Վարդովյան.- Հակոբ Վարդովյանը 70–80-ական թվականների անվանի գործիչ էր, դերասան, թատերական խմբերի կազմակերպիչ

(a) Ինչպե՞ս եք ըմբռնում այս հատվածի կերպարներն ու նրանց իրարից տարբեր կազմավորումները:

(b) Ձեր տեսակետը հայտնեք այն գրական հնարքների մասին, որոնք հեղինակն օգտագործել է ծիծաղ առաջացնելու համար այս հատվածում:

2.

Զմռան պարզ գիշեր

Համբույրիդ, գիշե՜ր, պատուհանս է բաց,
թո՛ղ որ լիառատ ծծեմ՝ հեշտագին
կաթը մեղմահոս լույսիդ տարփանքին՝
ու զով շաղերուդ կախարդանքը թաց:

Պարզ, լուսածածան, հրաշալի՜ գիշեր,
հոսե՛ սրտիս մեջ դյութանքիդ ալիք.
Ճերմակ երազիդ ցայտքերեն մեղրիկ
պուտ-պուտ կաթեցու՛ր հոգվույս սիրաջեր[1]:

Կուզեմ որ դադրին ձայներն այս պատիր,
ու նեկտարիդ դողն ըմպեմ ես անհագ.
կուզեմ որ մեռնի՛ն տիվ ու ժամանակ՝
ու դաբիրներուդ[2] իյնամ ծնրադիր:

Ու դաբիրներու՜դ իյնամ ծնրադիր,
այս պաղատագին շարժուձեւիս մեջ,
ու մինչ կողողեն զիս ցոլքերդ անշեջ,
աչքերս ալ մոռնան տակավ այս նատիր[3]:

Ցնորաբե՜ր գիշեր, ա՜հ, ընդունե՜ զիս,
ընդունե՜, միստիք ո՜վ անդորրություն,
իմ աղերսակոծ շունչիս սոսավյուն,
եւ համբույրն անանց՝ զոր կուտա հոգիս:

Սենյակս է լեցուն հուշքերովս աղի
երեկի հովին վայրագ տարփանքին.
ու դեռ կը հծծեն խորշերն ողբագին
վախը գրգանքին անոր կատաղի:

Ն՛երս խուժե ուժգին. նե՜րս պատուհանես
ու լեցուր խցիկս, մինչեւ կաթոգին
քու սրբությունով իր խորշերն հորդին,
եւ ես արթննամ վաղնջուց քունես:

Համբույրի՜դ, գիշե՜ր, պատուհանս է բաց,
թո՛ղ որ լիառատ ծծեմ՝ հեշտագին կաթը
կաթը մեղմահոս լույսիդ տարփանքին՝
ու զով շաղերուդ կախարդանքը թաց:

Միսաք Մեծարենց, *Ծիածան*, Պոլիս (1907)

[1] սիրաջեր:- Ջերմ սիրով, սրտագին

[2] դաբիրներուդ:- Տաճարի սրբազույն համարված մասը, որ Աստծո հետ հաղորդակցվելու վայր է համարվում

[3] նատիր: Ցածրագույն կետ:- Անձի ոտների ներքև գտնվող կետը: Զենիթի հակադիր կողմը

(a) Ինչպե՞ս ես մեկնաբանում բանաստեղծի հոգեմտավոր աշխարհը այս զգացումներով հագեցած քառյակների միջոցով:

(b) Բանաստեղծության կառուցվածքն ինչպե՞ս է նպաստում ընդհանուր քերթվածի իմաստին: